

իրենց կենսագրականներուն կից ունին մէկ կամ երկու արձակ կամ չափաւոր գրութիւններու խտական թարգմանութիւնները: Ամսագրին էջերը կը զարդարուին երբեմն ըստ առթիւն խարժրաստիճան բարերարներու և անձերու դիմանկարներով: Դիտելի կէտ մը սակայն. Ուխտիս Եր. Հիմնադրին անձին ու զործին նուիրուած տեղեկութեան տիտղոսը, ինչպէս և զրուսեան մէջ, դրուած է «Pietro di Mechitar» փոխանակ Mechitar di Pietro-ի. անշուշտ անուշադրութեան արդիւնք: «LE ORFANE ARMENE» իր ամէն թիւերուն մէջ կը պարունակէ նաև Որբանոցի զործունէութեան և Որբունիներու առօրեայ կենցաղին սեղմ Յիշատակագրութիւնը՝ ժամանակագրական կարգաւ: Հոն կը ներկայանայ Հայ որբունիի կեանքին ամբողջ օրական պատկերը, որ հաւասարապէս կը հետաքրքրէ թէ՛ օտարները թէ՛ Հայութիւնը:

Փակելէ առաջ ըսենք. «Պիոս ԺԱ. Որբանոց»-ի Գեր. Վարիշներն ու Առաք. Քոյրերը յիշաւի ոչ մէկ ջանք չեն խնայեր Որբունիներուն ընծայելու՝ որքան հնար է՝ երջանիկ ապագայի մը բարոյական ու նիւթական հանդերձանքը: Անոնք կը պատճառեն նաև հաճելի ժամանցներ՝ սարքել տալով թատերգութիւններ, երգահանդէսներ, ըսկառուական մարզեր և այլ տօնական հոգևոր և զարոցական հանդէսներ, ուր որբունիներն ինքնին ի յայտ կը բերեն հայուհայ ընտիր ձիւքն ու յատկութիւնը:

Իր վերջին էջերուն մէջ «LE ORFANE ARMENE»-ն ունի բաժիններ La pagina d'oro (Ոսկեդէս էջը) վերնագրին տակ, ուր կ'արձանագրուին հասնող դրամական ու նիւթական նպաստներն ու նուիրատուներու անունները՝ յօգուտ որբունիներու՝ ինչպէս նաև ամսաթերթի հրատարակութեան ծախքերուն:

Հ. Դ. ՏԱՅՏԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼԻ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՕՐՆԵՐ

(20-րդ դար)



(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 274)

ԺԲ. ԲԱԳԻՒԻ ՀԱՅԱՐԱՐՏՈՒՆԸ

Բազում Հայարտունը բացւեց 1925 Մարտից, որը հաստատուեց Արրէջանի Լուսնողկոմ ընկ. Կուլիկի կողմից:

Նրա նախագահ է հանդիսանում Ե. Սուրենը:

Հայ արւեստների տան նպատակն է ի մի խմբել հայ աշխատաւորական մտաւորականութիւնն, հնարաւորութիւն տալ մի կողմից՝ շեշտելու իր ինքնագործունէութիւնը, միւս կողմից՝ ծառայեցնելու մասսաներին իր ամբարած կուլտուրական պաշարն ու փորձը:

« ՀԱՅԱՍՏԱՆԻ » հրատարակող ամսագիրը նոյնանուն արւեստի տան օրգանն է: Նրա նպատակն է՝ « իր բովանդակութեամբ արտացոլի կարծիքները այն բազմազանութիւնը, որ տիրում է մի անկուսակցական ինքնայոժար կուլտուրական համախմբումի մէջ »:

Հայարտունն ունի չորս սէկցիաներ՝

Ա) Գրական.

Բ) Երաժշտական.

Գ) Նկարչական.

Դ) Թատրոնական.

Գրական սէկցիան առաջին իսկ օրից ցոյց տւեց մեծ եռանդ ու կենսունակութիւն: Նրա հրապարակային և սէկցիոն աշխատանքները կարճ ժամանակում բաւական լայն ու գոհացուցիչ արդիւնքներ տւին:

Պրօլէտ ասօսիացիայի հետ կազմակերպւած դիսկուսիաներում եւս զբաղւած սէկցիան իր ակտիւ վերաբերմունքն է ցոյց տւել դէպի նորագոյն հեղինակները: Հայարտան ծրագրով բացւելու են Երաժշտական, Նկարչական և Թատրոնական սեկցիաները:

Առ այժմ բացւել է Երաժշտական ստուդիա, որի տեսուչ նշանակւած է Երաժշտ. սէկցիայի նախագահ Անտ. Մայիլեանը:

Սէկցիան իր կազմակերպչական աշխատանքների հետ միասին, ցուցադրել է աշխատանք, զբաղւած սէկցիայի հետ կազմակերպել է զբաղւած երաժշտական երեկոյթներ, հրապարակ գալով իր երգեցիկ խմբով:


Թատրոնական սէկցիան ունի իր ակաթեմիկ խումբը, որի ուէթիսէօր է հրաւիրւած հայ անւանի դերասան Ար. Արմէնեանը: Խմբի մէջ են մտնում նաեւ վահրամ ֓ափազեանը, տ. Ժասմէն և ուրիշներ: Սէկցիան ունի իր վարչութիւնը և բէկէրտուարի յանձնաժողովը:

Առհասարակ պիտի նկատել, որ Հայարտան բոլոր սէկցիաները ցոյց տւին մեծ եռանդ և զործունէութիւն: Ֆազմակերպեցին մի շարք զբաղւած դասեր, դասախօսութիւններ, զբաղւած երեկոներ, մասնակցութեամբ դերասաններ, երաժիշտների, նկարիչների, զբաղւածագէտների և այլն:

Բագի Հայարտունը իր կարճ ժամանակւայ գոյութեան ընթացքում ապացուցեց, որ նրա հրապարակ գալը միանգամայն անհրաժեշտութիւն է 70 հազար հայութեան համար:

Դժուար է ժխտել հայ արւեստագէտների տան կարևորութիւնը Բագի համար: Մեր աշխատանքական մտաւորականութեան լաւագոյն տարրերն այսօր արդէն համախմբուած են թէ մէկի և թէ միւսի շուրջը: Իսկ այդ շատ լուրջ զբաղւած է մեր սկսած գործի անկասկած յաջողութեան:

ANTONIOS



ԺԳ. ԱՆՏՕՆ ՄԱՅԻԼԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԳԻՏ-ՄԱՆԿԱԿԱՐԺ, ԳՐԱԿԱՆԱԳԵՏ

Ա.

1. Կենսագրական ակնարկ

Անտոն Մայիլեանը ծնւել է Թիֆլիսում 1880 թւին, Մարտի 28-ին: Նրա հայրը՝ Սարգիսը բանուր էր, ունէր գեղեցիկ, ուժեղ տէնօր ձայն, և միաժամանակ խիստ հաւատացեալ էր ու հոգեւոր երգերի ինպրօվիզատօր: Իբրեւ աշակերտին նա սիրում է ժամանակակիցներէց: Գործից վերադառնալով՝ հաւաքում է նա իր ջութը՝ զաւակներին և նրանց բարոյագիտական առարկաներով ու երգերով զբաղեցնում ու դաստիարակում:

Անտոնի պապը, որ ապրեց 96 տարի, 30 տարի ուսուցիչ էր և եկեղեցական երգիչ: Բնական էր, որ մանուկ Անտոնն էլ պիտի ազդէր էդ երաժշտական մթնոլորտից: Այդ ժամանակ նա սկսում է սովորել որինդ, կլարնէտ և վերջում ջութակ, բայց մի քանի տարուց յետոյ թողնում է իր զօր-ծիքները:

Նկարչութիւն, երաժշտութիւն, գրականութիւն, բեմ և պար — ահա՛ էն սիրտ կապուած փոխզգացումները, որ կոխ էին մղում նրա մանուկ արտում:

Սկզբնական կրթութիւնն ստանում է նա Թիֆլիսի ուս. քաղաքային դպրոցում. ապա երրորդ դասարանից ընդունւում է Ներսիսեան դպրոցը, ուր միաժամանակ պատրաստւում է գիմնազիական ցէնզ ձեռք բերելու, սակայն հիւանդութիւնը նրան խանգարում է և մեկամսեայ դարձնում:

Նա 12 տարեկան հասակում զբաղւում է գրականութեամբ և 1897 թւին (գեռ Ներսիսեան դպրոցի II-րդ դասարանի աշակերտ) հրատարակում է վրացերէնից թարգմանած «Որք» գրքույլը:

1900 թւին հրատարակում է իր «Տխուր վայրկեաններ» հոգեբանական էսիւնները, որ արժանանում են երկրորդ տպագրութեան: Երկու տարի յետոյ լոյս է ընծայում իր «Արմէն» պատկերազարդ վէպը:

Նկարչական ապարիզում ևս ցոյց է տալիս շնորհ. դեռ աշակերտ ժամանակ նկարիչ — ուսուցիչ Շամշինեանը նրա նկարներն արժանացնում է ցուցադրութեան:



Անտոն Մայիլեան

Բեմը հետաքրքրում է նրան նոյն հետաքրքրութեամբ և սաստիկ տարւում է բեմական կեանքով ու պարով, Երկու տարի խաղում է նա Թիֆլիսի արտիստական թատրոնի կանոնաւոր խմբում՝ ղեկավարութեամբ Մօսկայում թատր. դպրոցն աւարտած Նիկ. Յովհաննիսեանի, որ այն ժամանակ տրադիկական մահ ունեցաւ։ Պատանի Անտոնն այդ խմբում խաղում է «Ռէքագործի ընտանիքում» Սինեօրի դերը, «Համկետում» Ռօզէնկրանց և այլն։ Միաժամանակ աշակերտում է երաժշտազէտ Մակար Եկմալեանի և երգիչ Կարա—Մուրզայի խմբում։ Այս կենսագծումները ցոյց են տալիս, թէ պատանի Անտոնի բազմակողմանի ընդունաւորութիւնները չեն բարգաւաճում նորմալ կեանքում և նրա առանձնայատկութիւններին ուղղութիւն տուող չի լինում։ Այդ է պատճառը, որ նա երաժշտազէտ լինելով հանդերձ՝ մինչև օրս չի բաժանուում զբաղանութիւնից և թատրոնից։

1900 թւին աւարտելով Թիֆլիսի հաշւապահական դասընթացները նա մրցումով ընդունւում է Թիֆլիսի երաժշտական դպրոցը երաժշտազէտ Նիկ. Նիկոլայի տեսչութեան օրով, որի ստիպէնդատն էլ լինում է երեք տարի, և ուր աւարտում է հարմօնիայի ուսմունքը։

Դեռ ուսանող ժամանակ, Մակար Եկմալեանի մահից յետոյ, հրաւիրւում է «Ներսիսեան դպրոցը» (1903 թւին)։ Անուհետև՝ 1905 թւին հրաւիրւում է Բագու «Հոփսիմեան դպրոցը» որպէս ուսուցիչ—խմբապետ, ուր պաշտօնավարում է մինչև հայ—թրքական կոտորածը (1918 թ.)։

1910 թւին, Բագուում, իր ջանքերով և իր սուղ միջոցներով սկսում է հրատարակել «Թատրոն և Երաժշտութիւն» պատկերազարդ ամսագիրը։

1911 թւին քննութիւն է տալիս Խէրսօնի Մանկավարժական—Խմբապետական դասընթացներում։ Այնուհետև Օդէսայում կազմակերպւում է փորձական համերգային խումբ՝ մօտ 100 հոգուց բաղկացած և ստանում լաւագոյն աւարտման վկայականը։

1918 թւի հայ—թրքական կոտորածից փախչում է Թիֆլիս և կազմակերպւում երգեցիկ խմբեր, պաշտօնավարելով Լիսիցեանի հայ և Բերդաշվիլու վրաց գիմնազիաներում։

1919 թւին երաժշտական—Թատերական խմբի հետ անցնում է Պարսկաստան, ուր մի շարք բեմադրութիւններ ու համերգներ տալուց յետոյ պահում են նրան էնզէլիում աւագ ուսուցչի պաշտօնով։ Էդ սեզօնին կազմակերպւում է մօտ 25 համերգներ։ Ապա 1920 թւին, Ալլըքէջանի խորհրդայնացումից յետոյ, վերադառնում է Բագու, ուր բացւում է նրա համար շատ աւելի լայն ասպարէզ։ Նոյն թւին հրաւիրւում է նա Բագու Լուսժողովի կողմից կազմակերպելու առաջին արևելեան Թատերա—երաժշտական ստուդիան՝ հայկական, թրքական և ռուսական բաժիններով, որ յետոյ անւանեց Լուսժողովոյ ընկ. Բունիաթ—Չաղէի անւամբ։

1922 թւին բացի ստուդիայի վարիչ Ֆալուց՝ հրաւիրւում է արևելեան կօնսէրատօրիայի վարչի պաշտօնով (Ս. Օզանեզաշվիլուց յետոյ) և որպէս ղեկավար արևելեան երգեցիկ խմբի։ Այսպիսով նրա խնամքին յանձնւում է մօտ 700 հոգի երկսեռ ուսանողութիւն։

Ստուդիայի ցուցադրական ներկայացումները, որ տրւում էր մեծ սինֆոնիկ օրկէստրով, Ա. Մայիլեանի ղեկավարութեամբ, թուրք մամուլն իր մեծ յօդածներում անւանում է նրան «Արևելեան երաժշտութեան նորագոյն մեկնաբանող», իսկ Լուսժողովոյ ընկ. Բունիաթ—Չաղէն մեծ թատրոնում «Միկեոն»-ի ներկայացման գովեստի ճառ արտասանում։

1923 թվին Բագրի Մանկավարժական ինստիտուտը հրաւիրում է նրան որպէս մէթոդիկայի դասատու (հայ, ռուս, թուրք բաժիններում)։

Ամառները նա շարունակ ճանապարհորդում է և համերգային խմբեր ու ամառնային ստուդիաներ է կազմակերպում Կովկասի զանազան քաղաքներում։ Այդ աշխատանքներից աչքի են ընկնում Ղարաքիլիսայի (Հայաստան) ամառային Մանկ. ստուդիան, որն իր աշխատանքները ցուցադրում է Ղարաքիլիսա, Սաե-



Ամ. Մայիլեանի մանկական խումբը Բագում 1907 թվին

փանաւան և Լենինական... Ուշագրաւն այն է, որ ստուդիայի աշակերտութիւնը կազմում է բացառապէս զիւղացու երեխաներից։

2. Ի՞նչ պաշտօններ ունի նա այժմ Բագում

- 1) Մէթոդիկայի դասատու է Բարձր. Մանկ. ինստիտուտում։
- 2) Բագրի Հայարտան երաժշտական սէկցիայի նախագահն է։
- 3) Թուրք կանանց ուսուցչական սէմինարիայի մէթոդիկայի դասատու է և խմբապետ։
- 4) Անդրկովկասեան զինուորական դպրոցի դասատու է (հայ, թուրք, վրացի և ռուս բաժանմունքների)։
- 5) Երգեցիկ խմբերի ղեկավար՝ ա) բանուորական խմբի, բ) համալսարանի հայ և թուրք երգեցիկ խմբերի։

3. Անտօն Մայիլեանը որպէս խմբագիր—նրատարակիչ

Թատրոն և Երաժշտութիւն։ Անտօն Մայիլեանի ամենամեծ արժանիքը նրա գեղարուեստական հանդիսի հրատարակութեան մէջ է կայանում։ 1910 թվին

Բազում հրատարակում է «Թատրոն և Երաժշտություն» պատկերազարդ ամսագիրը, որ իրեն նպատակ է դնում. «Գրի ասեղի ժողովրդական երգերը, տարածել հայ մասսայի մեջ գտնված ու մշակված երգեր, հետո պահել նրանց շինծու, այլանդակ ու զանգիկ երաժշտությունից և երթացնել նրանց ձաշակը. հասաստարապես քառերոնքի զարգացման հարցը պետք է լինի ամսաթերթի մշտական հոգսածության ատարկան»:

Ի՞նչ է կատարում Հանդէսն իր զոյութեան 7-ամիսյ ընթացքում:
Չնայելով իր թերութիւններին՝ հանդիսանում է ժամանակաշրջանի թատրոնական հոսանքների և երաժշտական կուլտուրական շարժման միակ օրգանը: Այնտեղ դուք կը գտնէք գեղարուեստական ժամանակակից յուզող, տանջող հարցեր: Ի՞նչ է հարկաւոր հայ երաժշտութեան և հայ թատրոնին, որոնք են նրանց առաջադիմութեան լծակները, ո՞վ է Շէկսպիրը, Պետ. Աղամանը, Սունդուկեանը, Եկմալեանը, Կարա Մուրզան, Ռուբէն Շտէյնիյն, Ի՞նչ են ներկայացնում հայ և վրաց ժողովրդական երգերը, թատրոնը մեծ յեղաշրջումի օրերին, — ահա մի շարք ժամանակակից հրատապ հարցեր, որոնց դնում է հրապարակի վրայ հանդէսը:

Ամագիրը գովեստի է արժանանում իր ժամանակ հայ և օտար մամուլից: Մօսկւայի «Կեանք և Երաժշտություն» ամսանախը 1924 թւին գրում է. «Անտոն Մայիլեանն իր խղճուկ միջոցներով և դժարութիւններով, մեծ քաջութեամբ տանում էր էջ զօրծը: Բայց որքան գնահատելի և առատ նիւթ է տալիս այդ փորձիկ թերթը հայ երաժշտութեան պատմութեան վերաբերեալ... Թերթը խմբել էր իր շուրջ՝ երաժշտագէտ Կոմիտաս, Ռոմ. Մելիքեան, պրօֆ. Պօպով (Պապեան), Ռ. Ղըրզանեան, Ս. Մուրադեան, Մ. Միրզոյեան և ուրիշներ:

Հանդէսը զազարում է թուրք-հայկական դէպքերից յետոյ, 1918 թւին:

4. Անտոն Մայիլեանը որպէս համերգատու խմբապետ

Համերգային գործունէութիւնն սկսում է դեռ սիրող ժամանակից (1898 թ.) Թիֆլիսի Հաւաքարի և Մուրաշկսի թատրոններում, որտեղ դերասան Միրզոյանի հետ կազմակերպում են ժողովրդական ներկայացում — համերգներ և արևելեան օրկէստր (որն իր սեռակով առաջինն էր կոչկատում):

1903 թ. սկսում է շրջել գաւառները: Առաջին գաւառական համերգը կայանում է Լոռու — Շուշաէր գիւղում:

Նրա համերգների բնոյթը մեծ մասամբ եղել է ինտէլիտացիօնալ և այդ տեսակէտից նա հանդիսացել է ոչ միայն մեր, այլ և ընդհանրապէս երաժշտական ասպարիզում առաջինը:

Ճանապարհորդութեան ընթացքում կազմակերպել է նա զանազան տեղեր հայկական, վրացական, ռուսական և թուրքական երգեցիկ խմբեր, որոնց նիւթը եղել է ժողովրդական և ինքնուրոյն երգը: Բաւական է յիշել, որ միայն Աղբրէշանում 1920 թվից տեւել է մօտ 70 համերգներ:

5. Ի՞նչ է արել նա բանւորութեան համար

Կազմակերպել է մի շարք համերգներ և նպաստել մասսայի գեղարուեստական ձաշակի զարգացմանը: 1908-10 թիւը կազմել է նա ամենաառաջին բանւորական ինտերնացիօնալ երգեցիկ խումբը:

Յարական կառավարութեան ժամանակ, 1910 թւին, նա 250 հոգուց բաղկացած համերգային մի խումբ է կազմում, որին մասնակցում են զուտ բանուոր բանտրուհիներ զանազան ազգերից: Դա ամբողջ Թուստանում ամենաառաջին երևոյթն է, որին արձագանգում է ժամանակակից մամուլը:

Սակայն նա որպէս խմբագրատն—համերգատն խոշոր դեր է կատարել ոչ միայն հայ ասպարիզում, այլ օտարների համար:

Նա է եղել առաջին երաժիշտը, որ թուրքերի մէջ ցատածայն երգեցողութիւն է տարածել: Այն ժամանակ, երբ թրքուհին ամաչելով դէմքը թաքցնում էր չադրայի (սաւանի) մէջ, այժմ բնի է դուրս գալիս բազմաձայն երգեցողութեամբ (1921 թւից մինչև օրս): Ուրախալին այն է, որ թրքուհիների սեմինարիային խումբն երգում է նաև հայերէն:

Այս պէրիօդում Մայիլեանը թրքական Սատիր—ագիտ Թատրոնում երեք տարի երաժշտագրում է բոլոր պիեսաները, իսկ կուսակցական դպրոցում ձայնագրում 100 հատ յեղափոխական երգեր:

6. Ա. Մայիլեանի ցուցադրած արեւելեան խմբային պարերը

Նրա խմբային պարերն արժանացել են զովեռտի թէ հասարակութեան և թէ մամուլի կողմից: Այդ տեսակէտից Ա. Մայիլեանն ընդհանրապէս երաժշտական ասպարիզում միակն է, որ որոշ չափով տարւում է պլաստիկայով ու ռիթմիկ պարերով:

Առաջին անգամ արեւելեան խմբային պարը ցուցադրում է նա Բագի «Հոփսիմեան դպրոցում»: Բաւական ընդհանրացած է դպրոցներում ու որբանոցներում նրա «Զիաների պարը» և այլ ռիթմիկ խաղերը:

Թիշտակենք նաև Մայիլեանի երեք կինօ—բեմադրութիւնները. 1. «Զաֆա» (ինքնուրոյն), 2. «Ինքնակոյը» (ինքնուրոյն) և 3. «Գեղեցիկ պարսկուհին» («1001 գիշերներից»):

7. Երաժշտական ի՞նչ երկեր է գրել Անտօն Մայիլեանը

Մինչև 1918 թւի Սեպտեմբերի դէպքերը ոչինչ յիշատակել չենք կարող, քանի որ ոչնչացաւ ոչ միայն նրա բնակարանը, այլ և ամբողջ խմբագրութիւնը բազմաթիւ ձեռագիր աշխատանքներով:

Նրա քնարը սակայն այդ մեծ կորստից յետոյ չի լուում և նա էլ աւելի եռանդով 1920 թւից տալիս է մի շարք ուշագրութեան արժանի գործեր:

Ուշագրու է նրա «Հրաշագործը», «Վարդը և որբը» երաժշտ. հէքիաթը (3 գործ. նիւթը պարսկական հէքիաթներից): Բեմադրուել է պետական թատրոնում, մեծ օրկէստրով: Այդ երկից առաջ բերենք մի քանի հատուածներ.

Ա) «Վարդի պարը».


Բ) «Որբի և վարդի պարը».

Գ) «Արարական պարը».

Սրանք դաշնակահարները, ձայնակահարները, ծրագրերն են կազմում:

Նոյն ոճին է պատկանում նրա մշակած «Տաշկական պարը» և այլ դաշնամրի երկերը:

1918 թւի դէպքերից յետոյ երբ գաղթում է Թիֆլիս, կարիքից ստիպւած



գրում է մի քանի երգիծարանական – «Դրյի հանաքներ» – որոնք բեմադրվում են հայ բեմերի վրայ, Դրանք են.

Ա) «Անգլիացի փեսացուն կոպկասում» (3 գործ.)

Բ) «Սպեկուլյանտի կիներ» (3 գործ.)

Դ) «Պրը – Պուդր» (4 գործ. երաժշտական դրամա).

Դ) «Կոյսի աշտարակը» (4 գործ. նիւթը Սարգիս Զուլամանի պոէմից).

Ե) «Սարի սմբուլը» (4 գործ. ինքնուրոյն).

Զ) «Արեգնագան» (4 գործ. նիւթը՝ Դ. Աղայանի).



Ա. Մայիլեանի երգեցիկ խումբը Ալեքսանդրապոլում 1908 թիմ

Մանկական, 1921 թվից մանուկների և պատանիների համար գրել և բեմադրել է արեւելեան ստուգիայում ցուցադրական մի շարք աշխատանքներ, որոնց պատկերը հետևեալն է. «Գիւրդը» (հինգ գործ. նիւթը Յով. Թումանեանից), 2. «Մովսէս տիկնիկների բանգարանը» (փոխադր. երեք գործ.), 3. «Էս էլ իմ հեքիաթը» (երկու գործ. ինքնուրոյն), 4. «Գործարանի երեխաները» (երկու գործ.), 5. «Մանուկ ստրուկները» (երկու գործ.), 6. «Միկեոն» օպերան, որ բեմադրվել է երեք լեզուով և արծանացել է մրցանակի Բագրի Արտիստ. Կոնստանտնուպոլի Գեղ-Մեկցիայից (1922 թ.), 7. «Գիւլնաց տատի հեքիաթը» (1906 թ.), 8. «Չար Միկիլը», 9. «Բաղդի կորիզը», 10. «Տիկնիկ-Չիգիկը»:

Վերջերս նրա երաժշտական աշխատանքները բացառապէս պրօլետարական են: Նրա երաժշտագրութեան նիւթ են ծառայում պրօլետ-պօէտների Յակ. Յա. Կորեանի, Եղիշ Զարենցի և Ալազանի գրածները:

Նրա բազմաթիւ աշխատանքներից տպագրւած են մինչև այժմ հետևեալ երկերը. 1. «Մանկական երգ» («Հասկեր», 1908 թ.), 2. «Ինձ մի խնդրիր» (խօսք՝ Յով. Թումանեանի, երկրորդ տպ. 1909 թ.), 3. «Մանկական երգեր» (երկրորդ հրատ. 1910 թ.), 4. «Գարուն» և «Լոյս» (1912), 5. «Մանկական

երգեր» (1914 թ.), 6. «Զօն» (խմբերգ, 1918 թ.), 7. «Sandek» (Բրքերէն, հրատ. Բագրի Լուսժողովի 1924 թ.), «Հելուսն ան օրերը» (խմբերգ, խօսք Զարենցի, 1924 թ.), 9. «Աշխատանքի երգը» (խմբերգ, խօսք՝ Յակ. Յակոբեանի, 1925 թ.), 10. «Ծովի երգը» (խօսք՝ Յ. Կոստանեանի, 1925 թ.), 11. «Ողջոյն նորեկ աշխարհին» (խօսք՝ Յակ. Յակոբեանի, 1925 թ.), 12. «Նոր երգը» (խօսք՝ Զարենցի, 1925 թ.), 13. «Նորերի մարշը» (խօսք՝ Ալազանի, 1925 թ.), 14. «Զան, ջան սարեր» (խօսք՝ Վարսենիկ Ալասեանի, 1925 թ.), 15. «Գործարանում» (խմբերգ, խօսք՝ Յով. Յակոբեանի):

Երաժշտագէտ Անտօն Մայիլեանն ունի մի ցանկութիւն, այն է, որ իր անտիպ աշխատութիւնները տպագրւին և դառնան ժողովրդի սեփականութիւն, — ահա՛ էն բոլորը, ինչ որ նա կը ցանկանար իր 25-ամեայ բազմակողմանի անդուշտ աշխատանքի համար:

(Շարայարեղի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՖՐԱՆԶԻՍԿԵԱՆ ԿԱՐԳԻՆ ԳԵՐԸ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԷԿԵՆՈՅ ԿԱՄԱՐԱՆՔԻ ԵՐԱՅՈՒՆԵՐԻ ԱՅՈՒՄԱՐԻ ՆՈՐ Ե ԳԻՏԱՆՔԻ ԷՋԵՐ՝ ՄԻԺ ԱՍՏԻԳԱՆՈՅՆ ՄԱՀՈՒՆԻ ԵՐԱՅՈՒՆԵՐԻ ԳՐԱՐԱՐԻ ՀԱՆՈՒՆԵՐՈՎ, ՍՈՅՆ ՄԻԺ ՂԵՎԵՐԻՆ ԳՐԻԺԷ ԵՐԱՅՈՒՆԻ ԱՄԱՆԻ ԲԵՐԹ Ե ՕՐԱԳԻՐ ԶԻՆ ԹԷ ԶԱՄ ԷՋԵՐ ՆՈՒՐԵՐԻ ԱՆԵՐԻՆ ԿԻՆԿԱՏՈՒՄ ԲԱԳՄԱՎԷՎԻՆ ՄԷՋ ԵՍ ՍԵԿ Մ՝ ԸՆԴՀԱՆԷՐ ԻՐԻ Ի ԵՐԱՅՈՒՆԻՆ Ե Ի ՍԵՐԱՆԿԱՆՈՒՄ ԽՈՆԱՐԻ ԱՍՏԻԳԱՆՈՅՆ՝ ՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐԴԵՐՈՒՄԻՆ ԵՐԱՅՈՒՆԻՆ ՄԻԺ ԲԱՐԻՐԸ ՄԱՏՈՒՄԵՆ Է՛, Մ՝ՆԵՐ ՀՈՍ ՄԻ ՄԻԱՅՆ ԿԻՏԻ ՆԵՐԿԱՅՈՒՆԵՐԻ ԻՐ ԿԱՐԳԻՆ ԱՅՆ ԺԱՌԱՅՈՒՆԻՆԵՐԸ՝ ՈՐՈՆԵՐ ԱՆԵՐԻՆԵՐԸ ԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐԻՆ ՀԱՐԵՍՏՈՒՄԻՆԸ:

Ա՛ս այս՝ ամփոփոյց մը պիտի տանք D. P. Abonti-ի հմտութից յօդուածէն, զոր հրատարակեր էր և L'osservatore Romano ՝՝ օրաթերթին մէջ:

Հ. Ղուկաս Վատտինի հոգեկաւոր պատմարանը ֆրանչիսկեան կարգին, իւր Մա-

տեմագիրք գրքին մէջ կը յիշէ 1931 Փրանչիսկեաններ, որոնք գիտութեան զանազան ճիւղերու մէջ փայլեցան: Երկար տարիներ Եւրոպայի գիտութեան հոգեկաւոր բնակը ֆրանչիսկեաններն էին որ գրաւած էին, մանաւանդ իմաստասիրական և աստուածաբանական ճիւղերուն, ինչպէս Բարիզու, Օքսֆորտի, Պոլոնիոյ, Քէմպրիճի, Քոլունիոյ, Թուլուզի, Ալքալայի, Սալամանքայի, Էրֆորդի, Վիեննայի, Հայտեկաբերի և Ֆուլտայի համալսարաններուն մէջ, իրաւամբ անուանին Կլաստոն կը գրէ «Օքսֆորտի, Քէմպրիճի, Բարիզու համալսարանները թակեղէն տարիներ կ'անցըէին երբ անոնց բնակը վրայ բարձրացած էին խոնարհ եղբայրներ, երբ Տունս Սքոթ, Ալքեսանդր Ալէս, Տէմորիսկոյ, Բէքքամ և Օքքամ կ'ուսուցանէին բոլոր աշխարհի ՝:

Տեսական Աստուածաբանութեան առաջին դասախօսն եղաւ Ս. Անտոն Բատուսցի, որ 1223ին առաջին անգամ զրկուեցաւ Պոլոնիա Ս. Ֆրանչիսկեանէն Ա.